ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետևյալ թափուր պաշտոնի համար՝ մեկ լոգոպեդ 1 դրույքաչափ:

Մրցույթին կարող է մասնակցել հաստատության տվյալ թափուր պաշտոնին Կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի N 416-Ն հրամանով սահմանված տարիֆաորակավորման պահանջներին համապատասխանող անձը:

Մրցույթի համար անհրաժեշտ է ներկայացնել

1) դիմում (Ձև 1)

2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).

3) անձը հաստատող փաստաթուղթ.

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).

5) ինքնակենսագրություն (Ձև 4).

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)

Մրցույթը անց է կացվելու 2023 թվականի մարտի 20-ին, ժամը՝ 15:00-ին, ք.Աբովյան Սևանի 2/4/4 հասցեում:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել անձամբ՝ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերը ընդունվում են 2023 թ-ի փետրվարի 14-ից մինչև 2023թ-ի մարտի 14-ը ներառյալ, ամեն օր ժամը 9:00-ից մինչև 16:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները կարող են հայտարարությանը հետևել (www.azdarar.am) և https://www.abovyan.am/ կայքերում:

Մրցույթը անց է կացվելու երկու փուլով՝ գրավոր և բանավոր:

Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով https://escs.am/am/news/11978

Տեղեկությունների համար զանգահարել +374 93339779 հեռախոսահամարին: